ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1-Լ **«12» հունվարի 2022թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասը և ղեկավարվելով ՀՀ վարչապետի՝ 11.06.2018թ. № 729-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ նաև տեսչական մարմին) կանոնադրության 18-րդ կետի 7-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությամբ սահմանված չափանիշների հաշվարկման և գնահատման կարգը՝ ըստ կից հավելվածի:

2. Սույն հրամանը հրապարակել տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում 2022 թվականի հունվարի 13-ին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

X

Ա. Շագաֆյան